Զնութեամբ, (1) Թէ մարդկային կամաց առ լինելոյ բարի ընդհանրապէս խօսեցեալ, պարտ է լինել համաձայն կամաց Աստ, վասնզի առաջին կանոն և չափ մարդկային բարի կամաց՝ է կամքն Աստ. քանզի առաջինն յամէ սեռի է չափ այլոցն ի նմին սեռի. արդ՝ կամքն Աստ է առաջին, և ծայրագոյն բարի. Ալ Թէ յորմէ, և զիարդ պարտ է համաձայնիլ, դժուարարի է։

Առ բացայայտութեամբ սորա գիտել պարտ է, զի յառարկային կամաց զերկու ինչ ունիմք համանալ. զմի՝ որ է իբր նպատական, այս է՝ զնոյն իսկ իրն կամեցեալ. և զմիւս՝ որ է իբր կերպական, այս է՝ զպատճառն կամելոյ, որ է վախճանն։ Համաձայնութեանն ըստ կամեցեալ իրին, ասի՝ համաձայնութեան՝ ի նպատական կամեցեալն. և համաձայնութեանն ըստ պատճառին կամելոյ, ասի՝ համաձայնութեան՝ ի կերպական կամեցեալն։ Օրինակ ասի եւ խնդիրս, սակայն ենթադրելի, Թէ կամքն Աստ իցէ ծանուցեալ զուրջ զմասնաւոր գործոց. քանզի եթէ չիցէ ծանուցեալ, մարթի է լինել բարի կամաց՝ առանց համաձայնութեանն նկատմամբ այնր գործոյ. ոչ՝ թ. Ծագ. է. գոյի Աւաւիթ վը կամելոյն չինել զտուն Տ՚ն, զոր Աստ ոչ կամէր։

Արդ՝ երբոյկի մարթի է ածային կամաց լինել մեզ ծանուցեալ, այս է՝ յայտնութեամբ, գործառութիւն. և պատուճ իրանաւ։ Ռանդի այնուիսկ, զի Աստ յայտնէ ինչ, կամ գործէ, եթէ ինքնին անընդմիջապես, և եթէ միջնորդութիւն երկրորդ պատճառաց, և կամ պատուհիրէ լինել, քաջայայտ է, Թէ կամ նա զայն։ Օյայսոսիկ ծանուցեալ, և ենթադրեալ,

Ասելի է (2)։ Կամքն մարդկային՝ առ ի լինել ուղիղ, պարտաւորի համաձայնիլ կամացն Աստ ի կերպական կամեցեալն, և ոչ ի նպատական, բայց եթէ կամք նպատական պատուհիրանաւ, կամ արգելմամբ։ Ի հասարակաց ընդ սիւն Ծովմայի։

Հայց. առաջին մասն։ (3) Կերպական կամեցեալն ածային կամաց, կամ պատճառ նի իբր զվերջին վախճան կամելոյ, է հասարակաց և ածային բարին, կամ բարին հասարակաց համօրէն տիեզերաց, ըստ որում ի վերջոյ կարգի առ Աստ, և առ փառս նր. քանզի զամ ինչ վը իւր արար Աստ. իսկարդ՝ կամքն մարդկային առ լինելոյ ուղիղ, պարտի կամել զոր ինչ միանգամ կամի՝ վը հասարակաց և ածային բարւոյ, իբր վասն վերջին վախճանի. ապա։ Հայց. փոքր։ Նպատ՝ բնական բաղձանք իւրաքանչիւր մասին՝ կարդի ի բարին հասարակաց բոլորին. ապա ևս առաւել՝ որ լինի բաղձալի ի բանական բաղձանաց՝ պարտի վերաբերիլ ի բարին հասարակաց։ (4) Արկարդ՝ չէ հնար մարդկային կամաց լինել ուղիղ, բայց եթէ ը որում բաղձալ ճշմարիտ և համեստ բարւոյ, այգ ցուցաք վերագոյնգ. իսկարդ՝ բաղձալով ճշմարիտ և համեստ բարւոյ, զորութեամբ լինելոյն բաղձալ ածային բարւոյ, որոյ համեստ բարին է սկզբնաւորութիւն, և հաղորդութիւն. ապա։

Հայց. երկրորդ մասն (5)։ Այն ինչ իրն կամեցեալ, որ է նպատական առարկայ կամաց, մարթի ը զանազան մտածուիլ լինել բարի, և չար, զորօրինակ մինչ աւազակին՝ մտածեալ ի գատաւորէն ը որում հարկաւոր հասարակաց բարւոյն՝ է բարի, և մտածեալ ի կնոջէն ը որում ինաստակար ընտանեացն՝ է չար. և ը հեռաւորն կամքն, որով գատաւորն՝ որոյ է խնամ տանել հասարակաց բարւոյն՝ կամի զմիմ աւազակն, է բարի. և կամքն, որով կինն՝ որոյ է խնամ տանել բարւոյ ընտանեացն՝ ոչ կամի զմիմ առն, է ևս բարի, վասզի կամքն, որ ոչ կամ

(1) Ասա՛ է. 19. գ. 9. Բուլ. (2) Ասա՛ է. 19. գ. 10. Բուլ. և է. 23. Ղևկ ճգլ. գ. 8.) Ա. ոտ. անգ. (4) Ասդ՝ սա. 1. (5) Ասդ՝ Բուլ.

մի ինչ ընդ բանիւ չարի, ոչ է նուազ բարի՝ քան զկամ, որ կամի ինչ ընդ բանիւ բարւոյ։ Իսկ արդ՝ Աստուած ըստ որում ընդհանուր տիեզերաց՝ դիտէ՛ի կամելն զընդհանուր պատճառսն, ոչ է հասարակաց բարին տիեզերաց, առ որ հարկաւոր է լինելն, և պահպանիլն ներհականացն, և յայտարարելն ստորոգելեացն իւրոց։ և վասն սոցին պատճառաց իրն կամեցեալ Աստուած՝ է բարի, այլ նոյնն ըստ մասնաւոր պատճառաց, զորս պարտ է մարդոյն դիտել, և զորս Աստուած կամի դիտել նմա, է չար։ Այսպէս կամք մարդոյ առ լինելոյ ուղիղ, ոչ պարտաւորի համաձայնիլ կամացն Աստուծոյ՝ ի նիւթական կամեցեալսն։ Այնինչ փոքրագոյնն՝ օրինակաւս։ Աստուած ըստ որում գիտագոյն կառավար, և տեսուչ համարէն աշխարհի, ըստ պահանջմանն և ըստ ընդհանուր պատճառաց հասարակաց բարւոյն, և փառաց իւրոց, կամի մեռանել հօր իմում՝ ի հերետիկոսութեան, և դատապարտիլ։ այս մահ և դատապարտութիւն ընդհանուր պատճառացս այսոցիկ մտածել՝ է բարի, նմին իրի և կամքն՝ բարի, որ զայն կամի։ Այս առանձինն մարդ, որում չէ անկ դիտել զընդհանուր պատճառս զայսոսիկ, այլ զմասնաւորս, եթէ սեփական անձին՝ ըստ բնական հակման՝ որ է բարի, և Աստուած՝ և եթէ ծնողին՝ ըստ բնական գթութեան, որում ևս և զայս պատուիրանին Աստուծոյ զհետ երթալ պարտաւորիմ, ոչ կամիմ զայս մահ և զդատապարտութիւն՝ Այս մահ, և դատապարտութիւն ըստ մասնաւոր պատճառացս այսոցիկ մտածեալ՝ է չար։ ապա բարի է կամքն՝ որ զայն ոչ կամի։ այնպէս զի թէպէտ և երեմի՝ ի միոյ կողմանէ խոտորիլ՝ ի կամացն Աստուծոյ, սակայն յայլմէ կողմանէ՝ այնպէս կամելով համաձայնիմ անուղղակի նմին կամացն Աստուծոյ, վասն այսպէս կամիլ ինձ՝ նա ինքն Աստուած կամի։ Ասատ սին Գոստինոս՝ յերեսնեւերորդ. գլ. 101. ասէ. Երբեմն մարդն բարի ասի՝ ոչ ինչ, զոր Աստուած ոչ ունի բարի՝ ըստ ինքեան. այլ ըստ ինչ ունելոյ ի նմա՝ զոր Աստուած ինքն ունի բարի՝ ըստ ինքեան։

Համառօտ։ Ունք ողջամիտ ասէ, պարտաւորիլ ինձ կամել զնմա վնասակարս անձին, որք ըստ կամացն Աստուծոյ հանդիպին ինձ, զսով, զհիւանդութիւն, զկրկիզութիւն տան, և զհամբարտաց, զնստութիւն ցրտոյ, զառապ արեգական, զօձս, զգազս, և այլն. և ոչ արդ ասացաք, զմահ և զդատապարտութիւն ծնողաց իմոց, մինչև չիցէ ինձ արժան՝ որչափ ինչ ձեռնհաս եմ՝ փախչիլ յայնցանէ, կամ զհակառակս ճգնիլ։

Ասացաք. Բայց երկիւղ Աստուծոյ պատճառաւ, կամ սքենչմունք. վտգի կանքն Աստուծոյ՝ ի պատուիրելն, կամ յարգելուն, ասէ միշտ յարակցեալ զկամն պարտաւորելոյ զնքադիկ՝ ի կամել և՝ ի գործել՝ զոր պարտաւորէ, կամ չկամել և չգործել՝ զոր արգելու, զոր ոչ ունին այլ կամք, եթէ հաճոյիցին, եթէ խորհրդոյն, և եթէ թոյլտուութեանն։

Առ լուծումն առարկութեանցն՝ որ ընդդեմ երկրորդ մասին եղեալ կացութեան, դիտել պարտ է, զի ընդհանուր կամեցեալն մարդ է կրկնակի մտածել. նախ՝ ըստ ինքեան, և բացարձակապէս. և երկրորդ՝ կերպապէս, և կրկնաբար, ըստ որում ներքոյ անկեալ կերպական կամեցեալ, կամ ընդհանուր վախճանի, զոր դիտէ Աստուած։ Արդ՝ զերկրորդ մասն եղելոյ կացութեան խնդրել պարտ է զնիւթական կամեցելոյ ընդ ինքեան, և մտածել ըստ մասնաւոր պատճառաց, և ոչ զայնմանէ կրկնաբար, ըստ որում ներքոյ անկեալ կերպական կամելոյն, և ընդհանուր վախճանի կամացն Աստուծոյ. քանզի այս է համաձայնիլ Աստուծոյ՝ ի նոյն իսկ կերպական կամեցեալն։

Գ Լ Ո Ւ Խ · Օ Ց

Երբեմն արտաքին ներգործութիւն յոթը՝ զբաղումն, կամ զբոլորն, և ի ներքին ներգործութիւն։

Ունք ինդրեմք աստանօր, թէ արդեօք արտաքին ներգործութիւն իցէ բարի, կամ չար. զի զայս ենթադրեմք ստուգիւ. քանզի վասն լինելոյն կամաւոր, համաձայն՝ կամ անհամաձայն բանի, ունի զնա՝ որ ինչ միանգամ պահանջի՝ ի լինել բարի, կամ չար։ Յա դարձեալ՝ ի վասն արտաքին գործոց են ունին պատուիրանք՝ ի տասնաբանեայ պատուիրանս։

Այլ ինդրեմք, թէ արդեօք արտաքին ներգործութիւն իցէ բարի կամ չար, կերպական բարութիւն կամ չարութիւն, զանազանեալ՝ ի բարութիւն կամ՝ ի չարութիւն ներքին ներգործութիւն, զոր յաւելու յայն։ Այս է ինդիրս զարտաքին ներգործութիւն, ըստ որում է սոսկ գործադրութիւն ներքին ներգործութեան. քանզի եթէ արտաքին ներգործութիւնքն լինէր պատահաբար, և արտաքուստ յարակցեալ բարութիւն ինչ, զորօրինակ մասնաւոր ընծրկ՝ ընդ արտաքին ընդունելութեան խորհրդոյ, կամ ընծրկ ներքուստ՝ ընդ արտաքին ողջմութեան կամ աղօթից,

ստոյգ է, թէ արտաքին ներգործութիւն զայս պատահական բարութիւն յաւելցուր ի ներքին ներգործութիւնն։ Վասն ձեռնարկ՝ եթէ ուր գործադրութիւն արտաքին ներգործութեան հարկ իցէ դիտել, կամ բազմապատկել զներքին ներգործութիւնն, ոչ բաղում անգամ հանդիպի, յայտ է ևս՝ թէ արտաքին ներգործութիւն յաւելու զբարութիւն, կամ զչարութիւն ի ներքին ներգործութիւն. բայց զայն՝ ոչ ըստ ինքեան և բանիւ իւրով, այլ ըստ առթիւ միայն, վասն զի ըստ առթիւ արտաքին ներգործութեան՝ լինի դիտելոյ, կամ բազմապատկելոյ ներքին ներգործութիւնն։

Ասելի է նաև։ Արտաքին ներգործութիւն, ըստ օրում ի սոսկապէս գործադրութիւն ներքին ներգործութեան, ոչ յաւելու յայն զբարութիւն ինչ կամ զչարութիւն պարզապէս ի կարգի էական վարձուց, կամ պատժոց, այլ միայն ըստ իմիք ի կարգի պատահական վարձուց, կամ պատժոց. Նմին իրի ոչ առնէ զգործօղն բարեգոյն, կամ չարագոյն պարզապէս, այլ ըստ իմիք միայն։

Ճառ. առաջին մասն։ Արտաքին ներգործութիւն, կամ մտածի ըստ օրում առարկայ ներքին ներգործուած, և կամ ըստ օրում գործ կամ գործադրութիւն նր. իսկարդ՝ և ոչ ըստ միում յերկուցս յաւելու ի ներքինն զգանազանել բարութիւն, կամ զչարութիւն. ապա։ Ճառ. առաջին մասն փոքրագունիս։ Իթէ արտաքին ներգործութիւն մտածեսցի ըստ օրում առարկայ ներքնոյն, բովանդակ բարութիւն կամ չարութիւն, որ է ի նմա առարկապէս, զնոյն ի ներգործութիւն կէրպապէս, մինչև առարկային չունել ինչ առարկանս, որ չիցէ ի ներգործութեան կերպապէս. ապա արտաքին ներգործութիւն՝ ըստ օրում առարկայ՝ չունի զբարութի ինչ կամ զչարութիւն զանազանել, յաւելու ի բարութիւն կամ ի չարութիւն ներքին ներգործութեան, գոլով երկուստեք նոյն, ընդ այսոքիկ տարբերութիւն, զի է առարկապէս յարտաքին ներգործութեան իրրև յառարկայ, և ի շարժիչ կամաց, և ի ներքին ներգործութեան կերպապէս իրրև յենթակայի։ Ճառ. երկրորդ մասն փոքրագունին, զորոյ է մանաւանդ գժաշարութիւն։ Արտաքին ներգործութիւն՝ ըստ օրում գործ, և գործադրութիւն ներքին ներգործուեն սոսկապէս, չունի զբարոյական, և զներքին բարութիւն ինչ, կամ զչարութիւն. այլ է բարի, կամ չար՝ արտաքին յարմնշանութիւն միայն՝ ի բարութիւն, կամ ի չարութիւն ներքին ներգործութեան. ապա ոչ յաւելու ի ներքին ներգործութիւնն զբարութիւն ինչ, կամ զչարութիւն զանազանել։ Ճառ. առաջարկ. Նախ՝ բացորոշ բանիւ սկզբն ամենայնի, ասա՝ պ. 3. առ 3. ուր ասէ. Ուր յաւուրն ըստ ե՛ի Լևոդացին, ելանեն առաջն՝ ու՛ր ի բեղբեցոյս, և ի մեզ. ըստ նմին օրինակի ելանեն առաջ եղեալ բարութիւն ներգործութիւն. ապա զբօրինակ առաջնութիւնն է ի դէղերայս, և ի մէկն՝ արտաքին յարմնշանութիւն միայն, նոյնպէս բարութիւն կամ չարութիւն բարոյական՝ յարտաքին ներգործութիւն։ Ճառ. երկրորդ՝ նոյն առաջարկ. դատաստիս ցաւածառաս։ Զգատաստիսն է հիմն բարոյականութիւն, նմին իրի և բարոյական ներքին բարութիւն կամ չարութիւն անդ անդ է հնար է լինել, ուր է ներքին ազատութիւն. իսկարդ՝ յարտաքին ներգործութիւն գործադրիչ կարողութիւն չիք ինչ ներքին ազատութեան, քանզի այս միայն ի կամս ի ներքս ունի ներգործութիւն։ ապա։

Հաստատի։ Իթէ արտաքին ներգործութիւն յաւելու ինչ ի ներքինն, այն յաւելուն՝ կամ է կամեցեալ ի ներքին ներգործութեանն, ոչ և է գործածեալ յարտաքին ներգործութեանն. և կամ ոչ. եթէ չէ կամեցեալ, ոչ է բարի, կամ չար բարոյական, և ըստ այսմ՝ ոչ յաւելու զբարութիւն ինչ, կամ զչարութիւն. իսկ եթէ է կամեցեալ, նմին իսկ յառաջադոյն լինի ի ներքին ներգործութիւն կամաց. յորում է հիմն բովանդակ բարոյականութիւն. ապա։

Ճառ. երկրորդ մասն ևզրակացութիւն։ (1) Ներքին ներգործութիւն բաղադրի առ արտաքինն իրրև գիմողութիւն, և շարժումն առ նոր, և առ վախճան. իսկարդ՝ առ գիմողութիւն և շարժումն կատարի, և վերջանայ ի ստանալն զվախճան, և ի հասանելն ցնոր. վասն ոչ է կատարեալ կամք, բայց եթէ իցէ այնպիսի, որ ըստ դիպել առթին գործեսցէ. ապա արտաքին ներգործութիւն յաւելու ի ներքինն զբարութիւն կամ զչարութիւն, ոչ պարզապէս, կամ զգանազանել ի բարութիւն կամ ի չարութիւն ներքնոյն, այլ զբան իմիք, այս է՝ զնոյն տարածեալ և կատարեալ, կամ զտարածութիւն և զկատարումն նր։

Առում ցՀետ գայ, թէ առնէ զգործօղն բարեգոյն, ոչ պարզապէս այլ ըստ իմիք, և թէ է ի կարգի պատժոց, կամ վարձուց, ոչ էական, այլ պատահականաց։

(1) Ընդ.

ՊԱՐԿ. Լ։

Ընդէս՝ հետևորդ գործն յառաջանայ եղեալ, և զարգանալ, և ընդ որ ինչ դիտեալ, յաւելու զբարութիւն, և զարգանալն արտաքին ներգործութեանն, եթէ ըստ ինքեան զհետ գայցէ, և եթէ ըստ պատահման։

Հրաւիրանի։ (2) Ընդունակ բարեգործն, կամ չարագործն է ներգործութեանն, որչափ բարեգործն, կամ չարագործն է կամքն։ Իսկապէս՝ բարեգործն, կամ չարագործն է կամքն այնորիկ, որ յառաջատես լինի, և դիտէ՝ բազում բարեաց, կամ չարեաց զհետ գալ գործոց իւրոց, և առնէ զայն, զոմն զկամն նոր, որ ոչ իմիք յայսցանէ լինեալ յառաջատես, և կամ դիտէր. ապա։

Ուստի, ըստ նոյն ինքն փիլիսոփայի առ յաւելուլ հետևորդ գործոյն զչարութիւն, չէ հարկ լինել ուղղակի դիտեալ, այլ շատ է լինել անուղղակի, և մեկնողապէս դիտել։ Այլ՝ յայնժամ է անուղղակի, և մեկնողապէս դիտեալ, յորժամ այնպէս յառաջատես լինի զհետ գալ, մինչև կարօղ լինել և պարտաւոր խոհականելոյ։ Իսկ յայնժամ է պարտաւորութիւն խոհականելոյ, և դադարելոյ ի ներգործութենէ, որում զհետ գայ, յորժամ չիք ինչ իրաւունք, կամ օրինաւոր պատճառ դնելոյ զայն ներգործութիւն։ Նայեալ թէ երբ դնին, կամ ոչ դնին իրաւունք, կամ օրինաւոր պատճառ դնելոյ զներգործութիւն, ոչ ինչ ընդդէմ կայով չար գործոյն՝ որ այնմ զհետ գան։ Ըստ է գժուարութիւն, և աստ աշխատանք, և չէ հնար ի մի կանոն փակել։ Պարտ է հայել յայն, թէ արդեօք գործն զհետ գայ այնմ ներգործութենէ ըստ ինքեան, թէ ըստ պատահման, և միշարակութիւն այլոց պատճառի. Թէ ներգործութիւն յայն չար գործ ազդէ ծանրապէս, եթէ թևեթևապէս. ի հնումն, եթէ ի մերձաւոր։ Վարձեալ՝ համեմատել պարտ է զչար գործն ընդ բարութեան ներգործութեան. քանզի մեծագոյն պատճառ պահանջի առ օրինապէս դնելոյ զներգործութիւն, որում ըստ ինքեան զհետ գայ չարն, քան որում ըստ պատահման, միշարկութիւն այլոց պատճառի. մեծագոյն, եթէ ներգործուն ի մերձաւոր՝ և ծանրապէս ազդեսցէ, քան եթէ թևեթևապէս՝ և ի հեռաւոր. մեծագոյն, եթէ օգտակարութիւն ներգործուն չիցէ առաւելագոյն, կամ գէթ հաւասարագոյ չարութեան գործոյն։ Որոց ամի խնդրատու եղել, զատել պարտ է բարոյապէս, թէ արդեօք իցէ՞ն, կամ ոչ իցեն իրաւունք, կամ օրինաւոր պատճառ դնելոյ զներգործութիւն։ Այլ տես զոր ասացաք զկամաւորէ անուղղակի, կամ ի պատճառն, ի պ. ։ վիճ. ։ ։ այսր ճառի։

Ասելի է երկրորդ։ (3) Գործն ըստ ինքեան ըստ հետ եկել ներգործուն, թէպէտ և չիցէ յառաջատես եղել, և ոչ ըստ ինքեան կամեցեալ, յաւելու զբարութիւն, կամ զչարութիւն, զոր ոչ ըստ ինքեան զհետ գայ ներգործուն, ըստ իրաց ինչ վերաբերեալ ի տեսեալ նոր, և յայնսկս է զօրութեամբ և ըստ ինքեան կամեցեալ ի նմին ներգործութեանն։ Այլ զարձեալ՝ այն ներգործութիւն է բարեգործն, որոյ բնութիւն է ընդաբոյս զհետ գալ բազում բարեաց. և այն է չարագործն, որոյ բնութիւն է ընդաբոյս զհետ գալ բազում չարեաց։ Սակ գործն համարի ըստ ինքեան զհետ գալ ներգործութեան, յորժամ միշտ, կամ իբր ի բազումն հանդիպի։ Սման այսորիկ գայթագղութիւնն զհետ եկեալ յայսմիկ պատնէութիւնն՝ ածեցուցանէ զչարութիւն նր, թէպէտ և պատնէին չիցէ խորհեալ զայնմանէ, վասն զի ըստ ինքեան զհետ գայ այնպիսի ներգործութեան։

Սակայն խնդ զայս եղբայացութիւն ընդ այսոքիկ չափաւորութիւն, յորժամ նմին ներգործութենէ ոչ զհետ եկեսցէ ըստ ինքեան միօրինակ անընդմիջապէս կրկին գործ, մին բարի, և միւսն չար, ըստ այլ սկզբան սեղ Վեշպին. ի. ի. խ. 64. պ. 7. այս է՝ յորժամ միոյ ներգործուէ են երկու գործք միօրինակ անընդմիջական, միւսն հնար է լինել ի դիտաւորութէ, և միւսումն առանց դիտաւորութեան, և ոչ համարելի նմա. ոչ յայտ է ի ջատագովութեան անձին ընդդէմ անիրաւ հրոսակին, որում միօրինակ անընդմիջապէս զհետ գայ փրկութիւն ջատագովելոյն, և մահ հրոսակին։ Օրմէ լինագոյն ևս ասացաք ի վիճաբանութիւն, որ ի վէմ իրաւանց և արդարութեան։

Ասելի է երրորդ։ (4) Գործն զհետ եկեալ ներգործութեան ըստ պատահման, եթէ չիցէ ըստ իրաց ինչ դիտեալ, ոչ ասացաք յառաջին

(1) Ար. ի. 20. պ. 5. Բալ. (2) Անդ. (3) Անդ. (4) Անդ։

ջին եզրակացութեանն, ոչ յանելու զբարութիւն, կամ զչարութիւն։ Այսինքն զի ոչ լինի գտանումն զերաց ինչ ըստ այնմ, որ ե ըստ պատահմանն։ Եւ երկրորդ՝ զի այսպիսի գործք ոչ ի-ւիք իրօք, ոչ յինքեան, և ոչ ի պատճառի են կամեցեալ։ Օգրինակն ունիս տեսանել ի կինն, որ իրաւացի պատճառաւ ելանէ ի տունէն, որ իրաւացի պատճառաւ ելանէ ի տունէն, որում յատուկտեսս լինի զնետ գալ գլորման ոմանց։

ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ե։

Ի վերայ խոշի մտաց։

ՊԱՐԱԿ Ա։

Օրինդ, ե յանկարծից էպե եղեալ մտաց։

Ասելի է նախ։ (1) Օխիղճ մտացն, որ ի Աստինս գիտողութենէ լսի, իբր գիտութեի՛ ճ այլում, կամ յարակցութեի՛, և մերձեցուցումն գիտուն առ մանաւանդ ինչ գործ, մարթի է սահմանել։ Ասացեալն, յոմ ապէրեցութենէն գործնական մտաց, որ ի հասարակ սկզբանց ապէրեն ինչ ի յոռնաւորն, ասէ թ այժմ լինել իրշելի՛ ներ ի ներ, յոմ առնել՝ ներ ընդ բան. կամ ոչ հասարակորէն ասի. Այլ ապէրեն զերարութի՛, յոմ զչարութի՛ նոցին, որ ասէ թ այժմ էն ի գործ առնելի։ Այդ խիղճ մտացն է եզրակացութի՛ գործնական հաւաքարանուն։ Այս ըստ այսմ՝ գործնական հանձարն, կամ տրտնջականն ասէ, չարն է իրշելի։ տրամադանութի՛ն առնու. խոկով՝ ընդ-ունէ-ան է չար. և խիղճ մտացն եզրակացութենէ ի մանաւորի. ասա ինձ ասէ թ այժմ պարտ է իրշել ի գործ։

Անկնի սահմանս։ Ասի, զոր ասէ, յոմ ապէրեցութի՛։ վճռի խիղճ մտացն է ներգործութի՛ն, և ոչ կարողութի՛, կամ ունակութի՛. քանզի զկարողութի՛ն չէ հնար ի բաց Թողուլ, և ունակութի՛ն է գժուարաշարժ. իսկ զխիղճ մտացն հնար է ի բաց Թողուլ, և դիւրաւ փոփոխի։ Ասի զոր ասէ, յոմ ապէրեցութի՛ն իրշելոյ. վճռի խիղճ մտացն վերարերի առ միտս, և ոչ առ կամս, ոչ յայտ է ի ստուգաբանութի՛ն իսկ անուանն. քանզի խիղճն մտաց՝ որ ի մեզ, բացայայտ ցուցանէ զներգործութի՛ մտաց, և գիտակցութի՛ն ոչ ասացաք, է ընդ այլում գիտութի՛։ Ասի, զոր ասէ էնդհանուր գիտութի՛ յածի զընդհանուր եզրակացութի՛ն շարիլ զբարութի՛, կի՛ զչարութի՛ մարդկային ներգործութենից, ասի կերպապէս գործնական, նոյնպես յորժամ խղճի՛ մտաց յածի զմանաւանդ եզրակացութի՛ն շարիլ զբարութի՛, կամ զչարութի՛ այսր ներգործութի՛ն ասա և այժմ գնելոյ, կի՛ խորշելոյ, ասի գործնականապէս գործնական։

Ասի՝ զոր ասէ, և ոչ հրամանն՝ որ բացատրի հրամայական եղանակաւ բայի, որ պէս. վճռի այսպիսի հրամանս ենթադրէ զխիղճ մտացն, և է բազում անգամ անհամաձայն նմ, ոչ յայտնելն խղճի մտաց, Թէ խորշել պարտ է յիմէ՛ իբրև ի չարէ, մարդն ի հրամայել բանին, և և ի խայթել խղճի մտացն, առնէ։

Ասի, (2) որ ապէրե ինչ ի Տառնաւորի՛ լինել առնելի, յոմ խորշելի. վճռի խիղճ մտացն, Թէպետ և է զանցելոց, վկայելով, Հաստատելով. արհամարհելով, և խայթելով, զորմէ Աւգաբանն ի. Կորնթ. ա. 12. * Պարծանս մեր այս է, վկայութի՛ն մտաց (ըստ Լատ. Խղճի մտաց) մերոյ ‖. և Հռոմ. կի. 24. ասի զխղճէ մտաց դատապարտելոց, * Որդւո նոցա ոչ վերծանեսցէ ‖. և յայն սակս զխիղճ մտացն ըստ բռնանդակ ընդարձակութենան իւրում սահմանել պարտ էր. Որ ապէրե ինչ լինել, յոմ լինելի. և յոմ ելանել առնելի, յոմ խորշելի. այլ քանզի ստոյ խօսիլք զխղճէ մտաց, ըստ որում է կանոն առնելեաց, նմին իրի և ընդ նովին ամփոփմամբ սահմանեցաք։

Ասելի է երկրորդ։ Խիղճն մտաց բաժանի առհասարակ ի ճշմարիտ, և ի սուտ, կի՛ ի մոլար. ի ստոյգ, և ի հաւանական, կամ ի կարծիքական. և յերկբայական, ի խճճեալ, և յընդարձակ։ Այսընդհանուր եզրանակօք դատի բանն ի սկզբանց հաստատելոյ զօրինաւորութենէ, կամ զապօրինաւորութենէ մանաւանդ առնելութեան. ոչ յայտ լինի ի Թուխլոյ, և ի մեկնութենէ իւրաքանչիւրոց։

Ա՛շմարիտ խիղճ մտացն է, որ ի ճշմարիտ սկզբանց ազդէ ինչ ի մանաւորի լինել օրինաւոր, կի՛ապօրինաւոր, որ է իսկապէս այնպիսի։

Սուտ, կամ մոլար խիղճ մտացն է, որ ի սուտ սկզբանց, այլ համարելոց իբրև ճշմարիտ, ազդէ ինչ լինել օրինաւոր, կամ ապօրինա-

(1) Ա. Տ. Ե. 79. պ. 13. Լատ. Ե. 19. պ. 5. Բաղ. Ե. 17. ի վէ ճշմ. պ. 1. Բաղ.
(2) Ա. Տ. Ե. ի վէ ճշմ. վերոյիշ։

քինաւոր, որ ոչ է խակապէս այնպիսի։ Այլ է կրկին, յաղթելի, և անյաղթելի մոլորութիւն, ոյք և նոյն իսկ տգիտութիւնն։

Մեղայ խիղճ մնացն է, որ կերպապէս, և ըստ ինքեան, և ըստ ամ սկզբանց իւրոց, յորոց անընդմիջապէս կազմի, է այնպիսի, մինչև արտաքսել զամ բանաւոր երկիւղ զներ-հականէն։

Հաւանական, կամ կարծիքական խիղճ մեղացն է, որ ի հաւանական և ևթէ սկզբանց ազդե ինչ լինել օրինաւոր, կամ ապօրինաւոր, ընդ երկիւղիւ ներհական մասին։

Երկբայական խիղճ մնացն է՝ կախումն մեղացոյ, որ ոչ իմիք մասին հակասութեան հաւանի, եթէ ևս հակադրեալ պատճառաց միօրինակ հաւանականաց, որ և ասի դրականապէս երկբայական. և եթէ ևս չունելոյն պատճառս ինչ հաւանութեան, կամ անհաւանութեան, որ և ասի բացասապէս երկբայական, և լաւագոյն ևս ասէր՝ անգիտութիւն, կամ տգիտութիւն. քանզի որում խնդրէ, ևթէ արդեօք աւազք ծովու իցեն զոյգ, լաւագոյն պիտի, ոչ գիտի, քան ևթէ երկիցուն. վասն ևթէ և ևս խնդրեր, ընդեր երկբայիս, չունիմ ինչ տալ պիտի։ Խիղճ մնացն ըստ երկուց եղանակացս ևս երկբայական, ոչ երևի լինել տիրապէս և ճշդիւ առնալ խիղճ մնաց, վասն ոչ է դատումն սահմանաւորելոյ, ոյք պարտ է լինել խղճի մնաց։

Ենթեմնատ խիղճ մնացն է, որ ի ընչին և միսպառ արհամարհելի պատճառաց դատի, կամ երկնչի, ևթէ գուցէ չար իցէ առնելոյն թիւնն։ Ուսցաք, դատի, կամ երկնչի. վասն ևթէ յիրաւի յայսպիսի ևթէ և ի անոտի պատճառաց դատեսցի լինել առնելոյնն չար, է խակապէս խիղճ մնաց. իսկ ևթէ միայն երկնչէ, ևթէ գուցէ իցէ չար ընդդէմ դատաստանն, զոր ունի զբարութիւն նի, ոչ է տիրապէս խիղճ մնաց, այլ առաւել ստուեր, կամ նմանութիւն խղճի մնաց։ Ուսոլինն ասի ի ենթեմնատութիւն կերպացնալ. և երկրորդն՝ ենթեմնատութեամբ վարանեալ։ Ընդդէմ առաջնոյն չէ արժան առնել, այլ ընդդէմ երկրորդին մարթի է, ոյ ասացուք ստորև։

Այլն, կամ ընդարձակ խիղճ մնացն է, որ ի կարի ինի ևթէ, և յորդմանէ պատճառաց դատի ոչ լինել չար՝ որ իսկապէս է չար, կամ ևթէ չար՝ որ է ծանր չար, կարօղ գոլով երկոցուն ևս հեշտաւ խեղաթիւր լինել։ Այս հայի փարիսեականն, որ զմեծն փոքր, և զփոքրն մեծ առնէ, զմժգուն քամէ, և զուղտն կլանէ։ Մատթ. ԻԳ. 24։ Երկրորդին այս խիղճ մնաց, խճճեցոն, և ընդարձակին, յայսմ՝ ոչ յայտ է՝ տարբերին ի հաւանականէն, զի հաւանականն հաստատի ի ծանր պատճառս, և ոչ սոքին, ուստի վերաբերին ի մոլորն։

ՊՐԲԿ. Ե.

Ընդէ՞ր պարտաւորի հաւատացեալ մոլոր խղճի տալոյ, և վնաս։

Կրինակի հնար է մեզ համառօտիւ խղճի մնաց. բացատրէ՛ ոչ առնելով ընդդէմ նի. և դրականապէս՝ առնելով ըստ նմա։

Ասելի է նախ։ (1) Ոչ երբէք արժան է առնել ընդդէմ խղճի մնաց, ևթէ յարգելոյնն, և ևթէ ի պատուիրեն. ևթէ ճշմարիտ իցէ, և ևթէ մոլար, թէպէտ և յաղթելի մոլորութեամբ. մինչև յաղթել՝ խղճի մնաց լինել իմիք արգելել չէ հնար առնել զայն. և յաղթելն լինել իմիք պատուիրեալ. չէ հնար զանց առնել զայնուիկ։ Ի հատարակ ընդ սէրն Աւգուստինի։

Յուց. Նախ՝ ի բանից անտի Ղաքելոյն, Հռոմ. ԺԴ. 23.* Ամենայն, որ ոչ ի հաւատոյ է, մեղ է։ Ամենայն հաւատովք առհասարակ սուրբ հարք և Ռեկնիչք խնման զխիղճն մնաց։

Յուց. Երկրորդ՝ բանիւ։ Նախ՝ (2) խիղճ մնացն է մերձաւոր և անընդմիջական կանոն մարդկային ներգործութեանց, ըստ որում ազդ առնէ, կամ մերձեցուցանէ զործնեա աստ և այժմ, որ պատուիրէ, կամ արգելու, և կամ ըստ որում զօրութիւն և անուամբ օրինաց արգելու, կամ պատուիրե զայս ներգործութիւն. թէպէտ և գուցէ օրէնքն ոչ արգելուն, կամ ոչ պատուիրեն. ապա առնել ընդդէմ խղճի մնաց՝ է առնել ընդդէմ օրինաց, որ ներգործութիւն պարտաւորէ, գէմ որ համարի այնպիսի, զոր չէ հնար առնել առանց արհամարհանս օրինաց։

Երկրորդ՝ (3) Նա մեղանչէ որ կամի զմեղս, և զայն ընդունի, իսկարդ՝ որ առնէ ընդդէմ խղճի մնաց, ևս և մոլար խղճի մնաց, կամի զմեղս. ապա։ Յուց. փոքր։ Նա կամի զմեղս, որ առնէ զայն՝ զոր դատի մեղք. իսկարդ՝ որ առնէ ընդդէմ խղճի մնաց, առնէ՝ զոր դատի մեղք. ապա։

Ասելի է

(1) Ա ոտ՝ Ի. 19. պ. 5. Բոլ. Ե վերոյհն. տեղ։ (2) Անդ։ (3) Ռոմ. Ե. պ. 26. Բոլ.

Ասելի է երկրորդ։ (1) Ոչ միայն պարտաւորիմք չառնել ընդդէմ անյաղթելի մոլորութիւն մոլար խղճի մտաց, այլև պարտաւորիմք բացարձակապէս առնել ըստ այնմ, յորժամ ազգէ՝ լինել խիք ի պատուիրանէ առնելի։

Հետ. նախ։ Ազգի զանցառութիւնն ներգործութիւնն, զոր անյաղթելի մոլորութիւն մոլար խղճի մտացն ազգէ լինել ի պատուիրանէ առնելի, ոչ է ի հաւատոց առաւել քան զգրութիւն ներգործութիւնն, զոր ազգէ լինել արգելեալ։ Երկրորդ՝ վասն ոչ առնելն ըստ անյաղթելի մոլորութիւն մոլար խղճի մտացն, որ պատուիրէ առնել՝ լինչ, է առնել ընդդէմ նմա. ոչ եթէ խիղճն մտաց ազգէ քեզ անյաղթելի մոլորութիւն ստել՝ առ ի փրկել զկեանս ընկերին, եթէ ոչ արասցես ըստ այնմ ստելով, նովին իսկ առնես ընդդէմ նի, իսկարդ՝ ի նախընթացից եզրակացութիւնէ յայտ է, թէ չէ արժան առնել ընդդէմ անյաղթելի մոլորութիւն մոլար խղճի մտաց. ապա։

Ասելի է երրորդ։ Հաւանականագոյնս պարտաւորիմք առնել ըստ յաղթելի մոլորութիւն մոլար խղճի մտաց, որ պատուիրէ՝ լինել խիք առնելի, ոչ բացարձակապէս, այլ թէութիւն, և ըստ ներգործութիւնէ, թէ ոչ՝ ի բաց դիցի, ոչ մարթի, և պարտի ի բաց դնել։

Այսր է նովիմբ պատճառք. մի՝ զի զանցառութիւնն ներգործութիւնն, զոր մոլար խղճէ մըտացն ազգէ՝ ի պատուիրանէ լինել առնելի, ոչ է ի հաւատոց. և երկրորդ՝ վասն ոչ առնելն ըստ յաղթելի մոլորութիւն մոլար խղճի մտացն՝ որ պատուիրէ առնել լինչ, է առնել ընդդէմ նորա, ոչ արդ ասեմք զանյաղթելի մոլորութիւն մոլար խղճէ մտաց. ապա։

Առիցես։ Կարող է, և պարտաւորի ի բաց դնել զայն խղճ մտաց. ապա ոչ պարտաւորի առնել ըստ նմա։ Բրդաթև կարող է, և պարտաւորի ի բաց դնել. այլ եթէ ոչ ի բաց դիցէ, զի՞նչ պարտ է առնել նմա։ Վանգի յայսմ ևեթ ենթադրութիւնէ զօրէ եզրակացութիս մի, է ասեմք՝ թէ պարտաւորի զհետ երթալ նմա, վասն ոչ կարէ ընդդէմ նի առնել, արդ՝ առնէր ընդդէմ նորա, եթէ ոչ զհետ երթայր նմա։ Անկարելիցես. ապա պարտաւորի մեղանչել, զի մեղանչէ զհետ երթալով նմա։ Այո՝ այդպէս է. պարտաւորի ի մեղանչել, ոչ բացարձակապէս, այլ յինենթադրութիէ՝ որ նմա է կամաւոր, զոր բառնալ կարող է՝ ի բաց դնելով զխիղճ մտացն։ Այս ոչ է անպատշաճ։

Ընդդիմացս նախ։ Օրհրդ՝ ի բաց դնել պարտ է նմա, որ ունի զյաղթելի մոլորութիեամբ մոլար խղճէ մտաց։

Պիտեմ։ Պարտ է ի բաց դնել զայն խոհմութիւն, և հաւատն քննութիւն. զի մի եթէ յանդգնութիւն ի բաց դիցէ, և գուցէ խղճէ մտացն՝ զորմէ կասկածի լինել մոլար՝ չիցէ մոլար, դիցէ զանձն ի վտանգի առնելոյ զլար՝ զոր խղճէ մտացն արգելոյր, կամ չարաչար զանց առնելոյ զլորով պատուիրեր. ապա պարտ է զաղերս խոնարհութիեն մատուցանել առ Այրն լուսոյ, զիրն բովանդակ ճշդիւ քննել, խնդրել խորհուրդ ի գրոց և ի գիտնոց, և զայնպիսի զգուշութիւն ի գործ դնել, զոր խոհեմ և ընտիր անձինք սովոր են ի գործ դնել ի մեծամեծ գործոցդիս։ Արդ՝ շատ է, հասարակօրէն խօսելով, ոգիտաց, նա թէ և խճճեսցի ուսումնական, գատումն եթէ հովանի, եթէ խոստովանաւորն, և եթէ վերնագունին, որ ասէ, թէ խղճէ մտացն է մոլար. վասն իրաւամբ ընթադատի, թէ Ա՛ծ նոցա, զորս եդ ուղղիչ այլոց, ոչ զանայ զայս կարևոր ի կատարվրել գնեն, չունելով նոցա զառանձինն։

Ընդդիմացս երկրորդ։ Արդեօք հայատանն կարող է հնազանդիլ վերնագունին ընդդէմ խղճի մտաց, որ ազգէ լինել ապօրինաւոր՝ աստ և այժմ հնազանդիլ նմա։

Պիտեմ, թէ ոչ. վասն՝ ոչ ասացաք, ոչ երբեք արժան է առնել ընդդէմ խղճի մտաց, և նա պարտաւորէ զօրութիէ ձեռնային պատուիրանաց, որ գնարագոյն է ի զպատուէր մարդկան։ Իսկ եթէ իցէ անյաղթելի մոլորութիէ մոլար, հայատանն պարտի զայն ի բաց դնել, և հնազանդիլ։

Այլ զգուշանալ արժան է, զի մի աստ չըփոթեսցի խղճէ մտացն զօրինաւորութիէ, կամ զապօրինաւորութէ հնազանդութիւն, զոր պարտ է մատուցանել աստ և այժմ վերնագունին, ըստ երկրայականին, կամ ըստ տեսական դատման զանհրաւորութիենէ պատուիրանի նի, ըստ օրում երևի շփոթել աստ ոմանց, և յայն սակս զայս խնդիր կարի ինչ կնճռեալ ճառեցաւ, և լուծանեն։ Վանգի սոքա են ամենևին տարբեր, և կարող է հայատանն երկրայիլ, կի՝ հաւանականագոյն ևս դատել տեսականապէս, թէ վերնագունին պատուիրէ զայր, և սակայն գործնականապէս դատել,

(1) Աստ՝ ե. 19. պ. 6. էջ։

զատել, թէ պատասխան ասա և այժմ հնազանդիլ նմա։ Ա՛ռ որպ բացատրութիւն

Խնդրիցես երբեմն Ա՛րդեօք հպատակն, որ երկրացի, կի՛ հաւանականագոյնս գատի զգատաճիրան վերնագունին լինել զապօրինաւոր իրաց, կարո՞ղ է, և պարտաւորի հնազանդիլ նմի։

Պէսպ՛։ Հպատակն, որ ոչ է ստոյգ, այլ երկրացի, կի՛ հաւանականագոյն ևս գատի, թէ պատուիրանք վերնագունին են զապօրինաւոր իրաց, հասարակօրէն խօսելով, կարող է, և պարտաւորի հնազանդիլ նմա, արարեալ անձին զինիզ մտաց բարոյապէս ստոյգ զօրինաւորութիւնէ հնազանդութեան իրոյ ի սկզբանցդ որք զհետ գան։

Ա՛յս՝ սի՛ հարց ուսուցանեն, թէ հնազանդիլ պարտ է վերնագունին, յորժամ ոչ է բոստոյգ, թէ որ պատուիրի՛ է ընդդէմ Ա՛յ։ Այն Օգոստ. գիրք 22. ընդդ. Փոստոսի, գլ. 75. ասէ. Ա՛յր արդար, երբ գոյ ընդ արքայէ, ընկալեալ և սերնահոգւոյս էցէ, զնուռըիցոյն, ուզըն-ըիւ յարօր է պարբերական ի հրամանէ նո, զոհելով զերծ ճարտարան խաղաղութիւն, որում այն որ պարտէրէր, պոյծ է՝ ըի ոչ է ընդդեմ աստուծի պարտէրանին, յա՛ ըի արդեօք ընդդեմ էցէ, ոչ է պոյծ։ Այն Ա՛ստուածարդոս՝ գիրք ի՛ վերջ պատուիրք. և տնօրին. գլ. 12. ասէ. Ո՛չ ինչ ճանգամ խնամոյ Ա՛յ պարտէրէր մարդ, որ ոչ էցէ պոյծ, ըի անհամոյ է Ա՛յ, ասելոյն անդէմարդ ընդառնել պարտ է, ոչ ըի Ա՛յ պարտէրէր։ Այն Ա՛ստուածարդոս սենայի՛ ի տրամաբան. որ ի՛ վե՛ հնազան, ասէ. Հպատակն, որ բռնաւորացեալ ելիցէ, ըի արդեօք որ պարտէրէր էցէ՞ հեղ, ըի ոչ, յայնժամ պարտաւորէ հնազանդիլ հնազանդելոյն։

Երրորդ՝ վերնագունն ունի ստոյգ իրաւունս պատուիրելոյ, և ոչ վե՛ երկրացւոյն հպատակին մերկանալ յիրաւանց իւրոց, ապա հպատակն պարտաւորի հնազանդիլ նմա. քանզի են առնչակից՝ իրաւունքն պատուիրելոյ, և պարտաւորութիւնն հնազանդելոյ։

Երրորդ՝ ի բացասուած հնազանդութեան, յորժամ չէ հնար նշանակել զպատճառն, տկարանայ իշխանութիւն ի վերնագունս, կորնչի հնազանդութիւն ի հպատակս, ծնանին կռիւք և կռիւք ընդ ամէն վերնագունից և ստորնոց. և այսպէս խափանի կառավարութիւն ի բաղումս, հանդերձ գայթագղութեամբ այլոց։

Ա՛րդ՝ յայսց սկզբանց, թէպէտ և ճշմարիտ տեսական երկրացւոյն, կի՛ հաւանականագոյն գատուածն զանհամաձայնութենէ պատուիրանին, զոր ենթադրեալք լինել անկաղթելի, կարող է հպատակն առնել անձին զինիզ մտաց բարոյապէս ստոյգ զհամաձայնութենէ հնազանդութեան իւրոյ, զայսօրինակ տրամաբանեալ. Կարող եմ, և պարտաւորիմ հնազանդիլ վերնագունին, յորժամ՝ ոչ եմ ստոյգ, թէ զոր պատուիրէ ինձ՝ է ընդդէմ Ա՛յ. խակարդ՝ ոչ եմ ստոյգ, թէ զոր պատուիրէ ինձ աստ և այժմ՝ է ընդդէմ Ա՛յ. ապա կարող եմ, և պարտաւորիմ աստ և այժմ հնազանդիլ նմա։ Ա՛ն ծագոյնն է բարոյապէս ստոյգ յերեալ սկզբանցդ. փոքրագոյնն է ֆիզիկապէս ստոյգ. նմին իրի և եզրակացութիւնն, որ է խրշձն մտաց, է բարոյապէս ստոյգ։

Ա՛սացաք, հռոմբոլօքեան խօսելով. վասն եզբակացութեին կրե զրացատութեի. այս է՝ եթէ հնազանդութեն զհետ եկեսցէ ծանր անպատշաճութի, քան անհնազանդութեն։ Ա՛ռանզի ոչ համարի, թէ խոհեմ վերնագունն կամեցի պարտաւորել յայնպիսի պարագայս, ապա թէ ոչ՝ զերգծանէր յիրաւունս իւր. և եթէ տգէտ գոլով՝ ատտիկս տիպեսցէ զանպատշաճութեին, իմանալ պարտ է՝ ցորչափ կարող է, և պարտի հպատակն հնազանդիլ։ Ա՛ս չէ հնար ասել, թէ ունի զստոյգ իրաւունս պատուիրելոյ յայնպիսի պարագայս. այլ ընդդէմն առաւել երևի ըստոյգ, թէ չունի։

ԳԼ Ի Կ. Գ.

Ա՛յս որոյ պէտութի, և ըստ ծրդելոյ ծանրութեան էցէ հեղ առնելն ընդդէմ խղճի մտաց։

Ա՛ռելի է նախ։ Ա՛ռնելն ընդդէմ եթէ ուղիղ, և եթէ մոլար խղճի մտաց, ըստ ինքեան ոչ է մասնաւոր մեղք. վասն պատուիրանին առնելոյ ըստ խղճի մտաց՝ ոչ է մասնաւոր պատուիրան, այլ ընդհանուր, որպիսի է պատուիրանն հնազանդելոյ օրինաց. Ա՛մին իրի՝ որ լինի ընդդէմ ուղիղ խղճի մտաց, զորօրինակ գողանալն ի խայթել խղճի մտաց, ունի զանաւսկ մեղացն՝ որ գործի, այս է՝ գողութեն. (1) իսկ որ լինի ընդդէմ մոլար խղճի մտաց, վերաբերի յայն տեսակ մեղաց, զոր ազգէ խղճի մտացն՝ ընդդէմ որոյ գործէ. զորօրինակ՝ եթէ խղճի մտացն ազգեսցէ ասել՝ ա՛ն ի փըրկ

(1) Ա՛նդ՝ գ. 5. տո 3։

կել զկնանա ընկերին, ոչ սուտն վկրարերի առ մեզ մարդասպանութեան. եթէ ազդեսցէ՝ թէ երդուելն է սեղանակապտութեի, եթէ երդումիցէ՝ լինի սեղանակապտութեի: Պատճառն է, վզի ներգործութեին տնօրինացուցանի յառարկային, ոչ ըստ որում է յինքեան, այլ ըստ որում է յմարդնման:

Աստի է երկրորդ: Որ լինի ընդդէմ եթէ յաղթելի, և եթէ անյաղթելի մոլորութեամբ մոլար խղճի մտաց, է մահուչափ, կամ նուիրի մեղք. ըստ որում խիղճ մտացն ազդէ լինել մահուչափ, կամ ներելի. զի ոչ անսակրն, նոյնպես և քանակութեին չարութեե առեալ լինի յառարկայէ, ոչ ըլ ինքեան, այլ ըստ որում ըմբռնի, և առաջի դնի կամաց. վասն որ առնէ ընդդէմ խղճի մտաց՝ որ ազդէ լինել մահուչափ, մեղանչէ մահուչափ, և եթէ ազդեսցէ խիղճ մտացն՝ լինել ներելի, մեղանչէ ներելի: Այլ ի բաց առնուլ պարտ է, բայց եթէ զոր խիղճ մտացն յաղթելի մոլորութեի մոլորեալ ազդեսցէ լինել ներելի, կամ թեթև. իցէ իրաք ծանր, և մահուչափ. վզի կամաւոր մոլորութեին, զոր օրինակ է յաղթելն, ոչ բառնայ զէական ծանրութեի մեղաց. նմին իրի որ գողանայ զոսկի, համարեալ յաղթելի մոլորութեի՝ լինել մեղք ներելի, տակաւին մեղանչէ մահուչափ:

Աստի է երրորդ: Եթէ մոլար խիղճ մտացն ազդեսցէ՝ լինել իմիք չար, այլ ոչ որոշակի՝ լինել մահուչափ, կամ ներելի, ոչ բառնամ անգամ հանդիպի, զանգանել պարտ է: Կամ խիղճ մտացն առաջի դնէ զեմ շըփոթութեի զնելն, զորով յածի իրրև գծանդր իր, և կամ իրրև զթենեւ իր: Եթէ առաջինն, առնելն ընդդէմ նմի լինի մահուչափ. և եթէ երկրորդն, լինի ներելի: Ի միշտ նոյն պատճառ. վզի քանակութեին չարութեե կամաց՝ է յառարկայէն բանիւ ըմբռնման: Իսկ եթէ ոչինչ իւիք, և ոչ իսկ շփոթութեի միտ դիցէ ծանրութեե, կամ թեթևութեանն, հաւանականագոյն երևի, թէ յայնժամ լինի մահուչափ մեղք առնելն ընդդէմ նորա. վզի ըստ այսմ արարոցն դնէ զանձն ի վտանգի մահուչափ մեղանչելոյ, և կամի գործել զմեղս, որ ինչ և իցէ: Հաստատ. Որ ի պատրաստի է երդնուլ զինչ և իցէ, եթէ ճշմարիտ, և եթէ սուտ, եթէ ոչ երդնուլ միտ ճշմարտութեին, և ստութեին՝ երդնուցու, մահուչափ մեղանչէ յերդնուն, թէպետ և զճշմարիտն երդնուցու. ապա ըստ նըմին օրինակի:

Այլ առ չափաւորութեի ինչ այսր լուծման վս հանգստեան խղճի մտաց, համարիմք ընդ Ալեքսիոսի, զի եթէ զր իցէ այնպէս պատրաստ հոգւով, մինչև ի գալն ի միտս նմի, թէ զոր առնէ, է մահուչափ, ոչ երբէք կամեր առնել զայն, անբասիր լինի ի մահուչափ ձեղաց. վզի յունակական պատրաստութեի, կի ի տրամադրութեի անտի համարի, թէ զայն զոր առնէ՝ ոչ ըմբռնէ իբրև զմահուչափ:

Գ Լ Ո Ւ Խ Ա Գ Լ Ո Ւ Խ Ք Ա Ռ Ա Ս Ո Ւ Ն Ե Ր Ո Ր Դ

Օ՞րէդր պարտ է ընդել խոստովանաւորն ընդ խոստովանողացն, ըզր պէտն առնել վասր ենիզ մտաց:

Աստի է նախ: Եթէ խիղճ մտացն իցէ յաղթելի մոլորութեի մոլար, երևի անտարակոյս թէ պարտաւորի խոստովանահայրն ազդ առնել խոստովանողացն իւրում. Նախ՝ վզի իբրև ըզբժիշկ պարտի զգուշացուցանել զնա ի կերպական մեղաց, յորոց ոչ լինի անբասիր յաղթելի մոլորութեի մոլորեալ խղճիւ մտացն. և երկրորդ՝ վզի սյնպիսի խոստովանողին է ի վճռակի չարութեի, և անընդունակ արձակման: Այս առնել պարտ է և զնացանել, որք հարցանեն, թէ արդեօք այս ինչ իցէ մեղք, թէ ոչ. վզի նովին իսկ՝ զի հարցանեն, երևին երկբայիլ, և չունել զանյաղթելի տգիտութեի. և այն զի խոստովանահայրն ոչ է միայն դատաւոր խոստովանորդացն, այլև վիպա, որոյ պաշտօնն է ուսուցանել, մանաւանդ զնա՝ որք խնդրեն ուսանիլ: Ուր զերկոսին մասունս զայսոսիկ նըշակացուս համարիմք ճշմարիտ, թէպետ և ոչինչ յայս ուղղութեե երևնացի. վզի նոյն պատճառք ըստիպեն, և ի վզ այսր ոչինչ անպատշաճութի գնետ գայ ազդարարութեին. քանզի միօրինակ մեղանչէ կերպապէս խոստովանորդին ազդ առնուլ, և ոչ ազդարարել, որովհետև յաղթելի տգիտութեի նորա ոչ արգարացուցանէ զնա ի կերպական մեղաց:

Աստի է երկրորդ: Եթէ խիղճ մտացն իցէ անյաղթելի մոլորութեի մոլար, պէտք են զանազանութեե: Կամ դոյ յայս ուղղութեան, և չիք վտանգ ծայրագոյն անպատշաճութեե գնետ գալոյ ազդարարութեին. և կամ չիք յայս ուղղութեե,

ղութեան, և գտանի վտանգ ծանրագոյն անպատշաճութեանէ, քան զնիւթական մեղս խոստովանորդին։ Եթէ իցէ յոյս ուղղութեան, և չիցէ վտանգ ծանրագոյն անպատշաճութեան, քան զնիւթական մեղս խոստովանորդին, պարտաւորի խոստովանահայրն ազդ առնել նմա, զի ըստ որում միտք՝ պարտաւորի ուր չիք երկիւղ անպատշաճութեան՝ ուսուցանել զխոստովանորդի իւր, և զգուշացուցանել զնա՝ ևս և զնիւթական մեղաց։ Իսկ եթէ չիցէ յոյս ինչ, և կիմկարի իմն սակաւ՝ ուղղութեան. և կիմ եթէ իցէ, բայց իրաւամբ արդեօք երկնչի ի ծանրագոյն անպատշաճութենէ, քան զմահու չափ մեղս խոստովանորդին, հասարակորէն խոստովանահայրն ոչ պարտաւորի, և ոչ իսկ կարէ ազդ առնել։ Պատճառ առաջին մասին է. զի ի բաց առեալ զյոյս ուղղութեան, ամենայնմ անպատշաճութեի զհետ գոյր. այս է՝ մեղանչել խոստովանորդին այնուհետև կերպապէս, մինչ յառաջագոյն մեղանչէր միայն նիւթապէս, և լինելովն ազգ արարեալ՝ դատապարտիլ, որում եթէ չէր ազդ արարեալ՝ կարող էր փրկիլ. ապա շատ է թողուլ զնա ի բարի հաւատս։ Պատրոյ սրբն Գրգոս. ճառ 4. ի մէջ յիսնից։ յառաջքերեալ ի գլ. Եզեկ. ԻԳ. զան. 7. ի վեր ասացին. Եթէ գէ՛ւթէ ոչ օգթել էր, ոչ ազգ առնէէ էր, ոչ էրէկցոցանէէ զնէ։ Պատճառ երկրորդ մասին է, զի ի բաղում չարեաց փոքրագոյնն է ընտրելի։

Ասացաք, հաւաքեալ. վասն ի բաց առնուլ պարտ է զդիպուածս ինչ։ Ի բաց առնուլ պարտ է նախ, եթէ խոստովանորդին տըգիտացի անյաղթելի տգիտութիւն, զորս են հարկաւոր ի գիտել հարկաւորութիւն միմնորդ առ փրկուն. զորօրինակ՝ թէ Աստուած է մի և երբեակ, թէ մարմնացաւ, թէ ցաւս զմեզաց՝ է հարկաւոր ընդ խորհրդոյն առ ընդունելութեի թողութեան մեզաց, և զորս սոցին նման։ Պանդխ՝ թէ իցէ յոյս ուղղութեի, և եթէ ոչ, խոստովանահայրն պարտի զայսցանէ ազդ առնել, և ուսուցանել զխոստովանորդի իւր. մի՛ զի այլազգ խոստովանորդին ոչ է ընդունակ արձակման. և երկրորդ՝ զի թէպէտ և ոչ ազդ արասցէ՝ տակաւին ոչ փրկի ի տգիտութենէ նոցին։ Ապա շատ ևս է դնել զնա յայնմ վիճակի, յորում կարօղ է փրկիլ՝ եթէ կամեսցի. և յորմէ հաւանական է՝ թէ ոչ արտաքս յոյս ուղղութեի զնա ժամանակս կենաց իւրոց։

Երկրորդ՝ ի բաց առնուլ պարտ է, եթէ անյաղթելի տգիտութի խոստովանորդն լինի ի գայթագղութի բազմաց, կամ ի միասս հասարակաց բարւոյն, ոչ եթէ քահանայն՝ որ մատակարարէ զնորհուրդն՝ իցէ անվաւեր ձեռնադրեալ, եթէ անվաւերութի ամուսնութենէ ինչ իցէ նշաւակեալ, ևն։ Ազդ առնել պարտ է խոստովանորդն, եթէ իցէ յոյս ուղղութեան, և եթէ ոչ. վասն բարին բազմաց, ևս առաւել հասարակաց բարին գերազանցէ քան զբարին մասնաւորի ումիք։ Այսմանք յաւելուն, և կարի իսկ քաջ, թէպէտ և տգիտութիւն խոստովանորդոյն լինցի ի ծանր միաս մասնաւորի ուրուք. վասն երևի լինել գործ սիրոյ և արդարութեի, առաւել զգուշացուցանել ի վերնասոցէ զակամայ անմեղն, քան զնա ի վերնասոցէ՝ որ ենթադրի կամաք իւրովք և չարաթեամբ անկանիլ յայն։

Երրորդ՝ ի բաց առնուլ պարտ է՝ ըստ ոմանց արդեաց, և քաջ իսկ. եթէ տգիտութիւն իցէ բնական իրաւանց ըստ երկրորդական ըստկըքանցն, զորօրինակ՝ գիճութեան, վաւաշ հեշտութեի, ևն։ Ազդ թէպէտ և հնար է լինել առ ժամանակ ինչ անյաղթելի տգիտութեի նոցին (զոր բազումք ուրանան), սակայն չէ հնար այնմ տգիտութեի ընդ երկար տևել, և հեշտեաւ և ի սուղ ժամանակի լինի յաղթելի վ կասկածանաց չարութեին, զոր ըստ ինքեան ի մէջ բերէ ներգործութեին ըստ ինքեան չար, և անհաւատ։ Այլ իրի՝ եթէ ոչ ազդ արասցի խոստովանորդն, զայն կասկած, յորժամ հանդիպի, իբր զանհիմն համարի նա ի լուսթե խոստովանահարց, և դիւրաւ արհամարհէ. և այսպէս արդէն ի կերպական մեղս, որ ի չարթեելի մոլորութեի մոլորեալ խիղճ մտացի, կայ և մնայ. իսկ եթէ ազդ արասցի նմա, յոյս գոյ, զի ի մեղանչելն մեծագոյն խայթիւ խղճի մըտաց, զչարաչար սովորութեին յայտնեսցէ խոստովանահարց, և ի նոցանէ ընկալցի զվերկաւոր դարմանս, և հուսկ յետոյ զաստուածս։

Ասիցես ընդդէմ երկրորդ մասին երկրորդ եզրակացութեի։ Խոստովանորդին, յորում չիք յոյս ուղղութեի, եթէ ազդ արասցի նմա, չէ պարտ համարիլ ըստ բաւականին տրամադրեալ առ արձակումն. ապա։

Պնեմ. ուրա. ղառաջարկ։ Պանդխ առ համարելոյ ըստ բաւականին տրամադրեալ, շատ է, զի հերքեալ արհամարհեսցէ զնոսա ուսեալ

ուսանել քան զայմ չարիս ի հասարակի, և չէ հարկ իրևանել առ իւրաքանչիւր մտանաւորս, ապա թէ ոչ՝ նկատեալ զմարդկային դիւրաթահուելի, տակաւք լինելին ճշմարիտ ապաշխարօղք ։ Օ՛ի ասէ սիրն Յովմաս յաւմպետն. Ի. պ. 9. բղ. Օղեպեսաւլ պարբաւոլի՝ է հաւորիլ տասելիրել զինչ ի էպե պարիթա, տան ձղանչել ..... այլ ի մանաւորն ինանել առ այս պարիթ, կամ առ այն, ոչ պարբաւորն. Նա ինչ՝ չիմարուելիամբ գործել. ելել ոչ զանչն, կամ զայլ տպելոյ յայտնելոյ տանաւոր պարիթա։ .... Իսա յայն առ ինչանելն յայտնելոյն՝ առ մանաւորս, է ածել զմարդն ի ձորնունեան, և փալ զաւելն ձեղանչելոյ ։ Օ՛նոյն ուսուցանէ ի լրմ. խ. 3. պ. 1։

Հասացելոցս աստ ունիս մակաբերել նախ։ Զթէ խոստովանահայրն ծանիցէ զամուսնութի խոստովանորդոյն լինել ոչինչ, զոր նա ինքն խոստովանորդին անչաղձելի տգիտութի հաւատոյր լինել վաւեր. և եթէ խոհեմութի համարեսցի, թէ յազգ առնելն խոստովանորդոյն՝ չէ մեկնելոց ի համարեալ կնոջէն, և կամ եթէ մեկնեսցի՝ զհետ գան մեծամեծ անպատշաճութիք և գայթագղութիք, զորօրինակ՝ մրշանջնաւոր ատելութիք, և կապք, անժուժկալութիւն համատ ընտանեաց՝ կամ զաւակաց վատահամբաւութի, կամ լքումն, և որք ի սոցին սակի, պարտի լսել, և թողուլ զխոստովանորդին ի բարի հաւատս։ Իսկ եթէ իցէ զամուսնութէ, զոր պարտ է առնել, հայել պարտ է յանպատուհասութի խորհրդոյն, առ չարիս որոց սովորութի է զհետ գալ անվաւեր ամուսնութեան, եթէ ոչ ազդ արասցի խոստովանորդոյն. և զսոսա համեմատել պարտ է ընդ անպատշաճութէնց, որոց յատկատես լինի՝ զհետ գալ, եթէ ազդ արասցի նմա. և զոր նուազ համարեսցի, ընտրել պարտ է, ազդ առնելով, կամ լռելով։ Հասարակօրէն յորժամ բանք լինին զապագայ ներգործութենէ, ի կալ մնալ անթողէ իրացն, փոքրագոյն չարիք զհետ գան՝ եթէ ազդ արասցի, քան եթէ ոչ ազդ արասցի։ Այլ հասարակօրէն յայս դիպուճած ազդ առնել պարտ է խոստովանորդոյն։ Ի դիպուճածոց աստ ունիս լուծանել և զայլս, որք սոցին նման։

Ունիս մակաբերել երկրորդ։ Խոստովանահայրն պարտաւորի ազդ առնել խոստովանորդոյն, զոր տեսանէ ունել զմոլար խիղճ մեռանց ընդդէմ իւր, այս է՝ որ համարի լինել մեղք՝ որ ոչ է, կամ լինել մահուչափ՝ որ է ներելի միայն. զորօրինակ ասիկն համարել պարտաւորեալ զանձն ընդ մահուչափ մեղք առաջիկայ գտանիլ երեկոյեան ժամուն յաւուրս կիւրակէից, և հրամայեալ տօնից, կի չլինել կարող առ զոլացումն անձին ըմպել յաւուր ծոմապահի. կրօնաւորն, կամ կոյն հաւատոյ զանձն ընդ մահուչափ մեղք պարաւանդեալ ի լռութի, կի՝ի ծոմապահս կանոնաց. ամուսնացեալ կինն համարի բազում ինչ մահուչափ մեղս ի գործածութէնն ամուսնեան, որք են միայն ներելի։ Հայսոսիկ, և յորս սոցին նման, խոստովանահայրն պարտի ազդ առնել խոստովանորդոյն. վասն որպէս ասացաք, իբրև զվնասս պարտի ուսուցանել նմա, և իբրև զբժիշկ զգուշացուցանել զնա ի կերպական մեղաց. և առաւել՝ յորժամ ոչ գան զհետ անպատշաճութիք, որք իցեն գերազանց քան զանպատշաճութի՝ որք զհետ գան՝ եթէ ոչ ազդ արասցի նմա. քանզի այն՝ թէ գուցէ խոստովանորդին յայնմանէ դիւրագոյնս և յաճախագոյնս մեղսցէ ներելի մեղաց, է կարի նուազ անպատշաճութի, քան թէ միանգամ միայն մեղսցէ մահուչափ ի մոլար խղճէ մտաց

Գ Լ Ո Ւ Խ Ա Ր Դ.

Ի վերայ խճճեալ խղճի մտաց.

Գլուխս խնդրոյ.

Խնդրի նախ. Օ՛ինչ իցէ խճճմտութիւն, և զինչ իցէ խճճուտ խիղճ մտացն։

Պիտ. Խճճմտութիւն ասի այլաբանօրէն՝ ի խճճ, որ է մանրորդ կարծր քարի, և անկանի ի մուճակս ընթացողին, որ նմա ոչ այնչափ վնասէ, որչափ նեղէ, և զընթացսն կասպաղէ. ուստի խճճմտութէնին ոչ այլ ինչ է, բայց եթէ թևթև և նանիր պատճառ ինչ, որ դիպի ի վէմ չարութէն ներգործութէն, որոյ լուծումն ոչ գտանի, և վ այն միտքն կի համարի, կի կասկածի, կի երկբայի, և կի երկնչի տատապանօք, ոչ թէ չար իցէ ներգործուին։ Հնար է լինել կի զանցելոյ, ոչ եթէ ոք ի մտոտի ինչ պատճառէ երկիցէ, թէ գուցէ զհեղոք ինչ, կամ զպարագայիւք ինչ զանց արարեալ իցէ ի խոստովանութէն, գուցէ հաւանեալ իցէ փորձուէն, և՛ն. և կի զներկայէ, կի զապագայէ, զորօրինակ եթէ ոք ի յայսպիսի պատճառէ երկիցէ, թէ

թե գուցէ զոր առնէ, կամ զոր առնելոց է. իսկ մեզք։

Կրկնակի մարթի է զանազանիլ խմբմունտ խորհի մտաց, զորօրինակ ասացաք վերագոյնդ, պր. ։ ։ Ա՛ի՛ ի խմբմունտէ կերպացեալ, և է ազդեցութիւն գործնական բանի, որով զբ վն թե. թև և նմանիր պատճառաց՝ դատի զայն, զոր առնէ, լինել ապօրինաւոր, և կամ երկբայի զայնմանէ։ Ա՛յս խորհ մտաց անյատկապէս առ ի խմբմունտ, այլ է՝ կամ մոլար, և կամ երկբայական, և զայնմանէ ոչ խօսիմք ասուեն, քանզի ըստ որում վերաբերի առ մոլարն, առ ասացաք ի նախընթացս պրակդ. և ըստ որում վերաբերի առ երկբայականն, ասասցուք ի յաջորդ պրակիդ։ Ա՛ւ երկրորդն է խմբմունտութիւն վարանեալ, և տանջեալ, այս է՝ յորժամ զբ դատի՝ զոր առնէ՝ լինել օրինաւոր, սակայն ի թերթև ինչ պատճառաց երկնչի, և տագնապի, թէ գուցէ եղէ ապօրինաւոր. ուստի ոչ գայտ է, ըստ որում խմբմունտ՝ ոչ է տիրապէս խորհ մտաց, այլ ստուերք և նմանութիւնք խորհ մտաց։ Ա՛րդ՝ յանուն խմբմունտ խորհի մտաց՝ իմացեալ լինի առհասարակ, կի՛ նոյն իսկ խրճմունտին, որ է իբր աղբեցուի մտաց խմբմունտի, կամ նոյն իսկ տագնապն պատճառեալ ի խմբմունտութենէ, և կամ տրամադրութիւն հոգւոյն հակեալ ի խմբմունտութիւնս։ Ո՛չ խմբմունտ խորհ մտաց ըստ այսմ առեալ, իմանալ պարտ է զորս գնի։

Խնդրի երկրորդ։ Ընդ ինչ ինչ նշանաց մարթի է ճանաչել զխմբմունտ խորհ մտաց։

Պէի։ Հայոցանէ մանաւանդ։ Ա՛յսք՝ եթէ համարեսցի մեզս, զորս բազում անգամ խմասուունք և երկիւղածք իբրև ոչինչ համարին, կի՛ ի մի նոցին բազում անգամ երկբայեսցի, և յարձցէ զայս։ Ա՛րկրորդ՝ եթէ առն խոհեմի և իմաստնոյ, զորօրինակ առաքնորդի, կամ խոստովանահօր, որք հաստատուն լինել ներգործութիւնն օրինաւոր, կամ ոչ հաւատայ, և կի՛ տագնապիւ երկիւղիւ յայպաղէ, կրկին և կրկին հարցանէ զնոսին, կամ զայլս, ոչ ունէք հաւատացեալ, և զանձնամէծ ստուգութիւն հանապազ խնդրեալ։ Ե՛րրորդ՝ եթէ ի խոստովանութենէն այնպէս մանրազնին բացատրէ զմեզս, մինչև զոչինչ պարագայ, թէպէտ և ղթերթև, և զթերևագոյն ևս, նա թէ երբեմն և զանպատշաճն ևս զանց առնել. զնոյն բազում անգամ կրկնեալ, և պնդեալ, և ոչ խոստովանահօրն՝ որ ազդէ լինել բաւական անսայեալ, կամ ի մէ խոստովանութենէդ բարոյական զգուշութեամբ արարելոյդ՝ ոչ երբէք հանգչել, զնոսին բազում անգամ ըստ բոլորին, և կամ ըստ մասին կրկնեալ։ Չորրորդ՝ եթէ զանհմանեալ աղօթս, եթէ ժամասացութենէ, եթէ ապաշխարութենէ, եթէ ուխտ, և թէ ի պատարագելն, տաղտկալի յապաղմամբ առնէ, բազում անգամ կրկնէ զնոսին, և զկայ առնու, առ ի զղիտաւորութենէն և զմտադրութին վերստին նորոգելոյ։ Ա՛նց ի սոցանէ՝ կարօղ է, և պարտի նա ինքն խմբմունտն ճանաչել զանձն խմբմունտ, և ըստ այնմ վարել մանաւանդ ի վերայութենէ խոստովանահօր իւրոյ, կամ այլոյ ընտիր և ուսումնական առն, որում յոյսն ի խորհ մտաց իւրոց, որ դատի զնա լինել խմբմունտ։

Խնդրի երրորդ։ Ա՛րդեօք արժանի է առնել ընդգէմ խմբմունտ խորհի մտաց։

Պէի։ Ոչ միայն արժան է, այլև վայել է, նա թէ՝ պատասխանութենէ իսկ է առնել ընդգէմ խմբմունտ խորհի մտաց, զորմէ ասացաք լինել վարանեալ խմբմունտութենէ։

Պատճառ առաջին մասին է. վասն զի այսպիսի խմբմունտ խորհ մտացն ոչ է, որպէս ասացաք, ճշմարիտ խորհ մտաց, այլ ստուեր խորհի մտաց. և ոչ դատումն, այլ տագնապ ինչ և երկիւղ ամենևին անհիմն, և կի՛ սաստիկ երևակայուի, որով մարդն եղկելի վարանի։

Պատճառ երկրորդ, և երրորդ մասին է. վասն զի խմբմունտ խորհ մտացն է հիւանդութենէ ինչ հոգւոյ, որ զնաղղութիւնն վերդովէ, զղերմնանգութենէն բառնայ. ծնանի զհնղգութենէ, և զամենամէծ յատպուածն հոգևորականն կինաց. նա թէ տրամադրութիւն առ մեծամէծ մեղս յուսահատութենէ, հաշտչյութենէ, և անհաւատութենէ։ Ա՛նպէս զգուշանալ արժան է, զի մի խմբմունտն բռնութենէ խմբմունտութենէն յաղթեալ, խակապէս գործնականապէս դատեսցի, թէ չար առնէ, կամ գործնականապէս երկբայեսցի զայնմանէ. քանզի յայնժամ խորհ մտացն լինէր երկբայական, կամ մոլար, ընդդէմ որոյ չէ արժան գործել։ Ա՛յլ չէ պարտ դիւրաւ հաւատալ խմբմունտին, որ հաստատէ, թէ առնէ երկբայութենէ. քանզի հասարակորէն առնու զերկբային փոխանակ տագնապի, կի՛ երկիւղի, և կի՛ փոխանակ տեսական երկբայութենան, որ ոչ է խորհ մտաց։

Խնդրի չորրորդ։ Ո՞րք են գլխաւոր պատ-

ձառք խճճուռտութեան։

Պէտ ։ Ամենք են ներքին , և ամենք արտաքին ։ Ներքին պատճառքն են ։ Նախ՝ բնական խառնուճածն կասկածուռ , և երկչոտ , որպիսի են իբր ի բաղումն սեամաղձոտք ։ Երկրորդ՝ տկարամտութենի , և անհաստատութիւն հոգւոյ , որ ոչ կայ հաստատուն ի վի՛ իրացն միանգամ բացորոշելոց , կամ ի վի՛ գործնական սկզբանց ըստ բաւականին ծանուցելոց , և յայսմ գլխոյ՝ կանգնելք բազում անգամ լինին խճճուռտ քան զարս ։ Երրորդ՝ տգիտութենի , ոբով ոք չէ կարող գանազանել ընդ մէջ օրհնուռերին , և ապօրինուռերին . ընդ մէջ փորձուելեան , և հաւանութենե . կամ այնպիսի Ներքուի մտաց , որ բաւական իցէ մտածել զպատճառս երկայնելոյ , և անբաւական՝ լուծանելոյ զայնս ։ Չորրորդ՝ դաղտնի հպարտութենի , որով ոք կարի իմն վստահացեալ ի դատաւն իւր , ոչ ուրուք խորհրդոյ կամի անսալ ։ Հինգերորդ՝ կարի ի մէն խստութենիւն վարուց , որով տկարացեալ գլխոյն , դիւրաւ ամբոխի հոգին ։

Արտաքին գլխաւոր պատճառքն են ։ Նախ՝ ընկերութենի խճճուռից , առաքնոդութենի խըճճուռ ոտ խոստովանահօր , կի՛ ընթերցուռն դիպուածոց խղճի մտաց ի՛նմա , որ չունի միտս ի մտանալոյ , և որոշելոյ ։ Երկրորդ՝ գնէն , որ այսոցիկ Նեարագիտութենէ փորձէ դարձուցանել զմարդն ի կրթուռենէ առաքինուռեց ։ Երրորդ՝ նա ինքն Ինձ , այնպես թոյլ տուեալ , կամ ի պատիժ անցեալ մեղացն , կամ ի կրթուռենի խոնարհութենե , և համբերուռեն , կի՛ առ ի բաց թօթափել զնեղուռին ի ծառայուռենե իւրում , և կի՛ վն այլ ինչ վախճանաց , որ նմա ծանօթ ։

Հինգերի հինգերորդ ։ Պրպիսի դարմանօք պարտ է բժշկել զխճճուռտս ։

Պէտ ։ Նախ՝ ընդհանրապէս խօսելով , ըզպատճառս խճճուռտութեան բառնալ պարտ է ներհակնօք իւրեանց , ըզի ներհակնօք ներհականօք բժշկին ։ Նմին իրի՛ սեամաղձոտն նպաստիւք բժշկին առողջանայ . երկչոտն՝ յաճախ մտածուռենէ հայեացի ի բարութիւն Ինձ , և ծանիցէ զնա՝ ոչ իբրև զկիսատ դատաւոր , կի՛ իբրև զանգութեի հարկապահանջ , այլ իբրև ըզհայր բարի . հպարտն մի հաստատեսցի ի խոհեմութենի իւր , ըստ այսմ ինն և զայլոց ։ Երկրորդ՝ յաճախ և խնարհ աղօթիւք առ Ինձ առ փիլիարիչն վերացեալց դիմել պարտ է . զտապաստանս հոգւոյ իւրոյ համբերուռենէ , և հնարս յանձնառուէ մատուցանել նմա ի հատուցումն մերն մեղաց իւրոց , ստացեալ յայնժամ զորիական ինչ վստահութենի ընդունելոյ երբեմն ըզնպաստս , և զառնելոյ յետ մերկաց՝ հանդարտուռենե ։ Երրորդ՝ զվարս , և զհաստարակաց կարծիս երկիւղածաց , փոխանակ կանոնաց ուղիղ , ստուգիւ ի մոի եդեալ՝ թե Ինձ ոչ թոյլ տայ նոցա առհասարակ մոլորիլ ։ Չորրորդ՝ զգոյշ լինի դատարկուռենե , և վայրապար խօսիցդոց , մանաւանդ զգործոց անցեալ կենաց , ոբք բանան զգուշն խճճուռտութենե . այլ աշխատութենէ անընդհատ պարապեսցի , առաւել ևս նոցին՝ ոբք յաւէտ նպաստեն հոգւոյ , և զոհարձացուցանեն , քանզի միայն չունիցին ըզչարութենի ինչ ։ Հինգերորդ՝ և ըստ հասարակաց դատաստան , դարմանեսցի ամենևին հարկաւոր , և գրեթե մի միայն ի բժշկել զխճճուռտութենի , է կուրակերպ՝ և բացարձակ հնազանդութիւն բանից , խորհրդոց , և պատուիրանաց խոհեմ և իմաստուն առն , որում յայտնի է խիղճ մտաց նորա , զբօրինակ խոստովանահօր , կամ առաջնորդի ։

Խնդրի վեցերորդ ։ Ո՞րչ ինչ առնել պարտ է խոստովանահօրն ընդ խճճուռտ ։

Պէտ ։ Նախ՝ ուր տեսանէ խոստովանահայրն՝ խոստովանողդ իւրոյ լինել խճճուռտ , (և զայն կարող է ճանաչել ի վերոյիշեալ նըշանագրէ ,) ազդ արասցէ նմա , թէ է խճճուռտ , և ըստ կանոնաց խճճուռտութենին բժշկելի . զի մի գուցէ արհամարհելով զխճճուռտութենի՝ արհամարհսցէ զնոյն իսկ զնիրզ մտացն ։

Երկրորդ՝ ստեպ կրկնեսցէ նմա զկարկառուռթենի կուրակերպ՝ և բացարձակ հնազանդուռեամ բանից՝ և պատուիրանաց խոստովանահօր իւրոյ , արհամարհել զնւր դատուռն , և թողել զխճճուռտութենին . և զայս հնազանդութենի , եթե չունիցի պատրաստական կամս մատուցանելոյ , կամ առ այն գուն գործելոյ , արձակել պարտ է զնա իբրև զանբաւժելի . քանզի ոչ ասացաք , հաւիկ նման է նմա այլ ինչ դարմանօք բժշկիլ ։ Իսկ առ հաւանութեցուցանելոյ նմա զայս ամենակերպ և զկուրակերպ հնազանդութիւն , առաջի դիցէ նմա . Նախ՝ թէ խճճուռտն , քանզի ունի զամբոխեալ դատուռն , և զնսանգարելոյ երևակայութենի , ոչ կարէ կառավարիլ տեսական դատմամբ , և այլն սակս նմա առաւել քան զայլոց ասացեալ է ։ Երկրորդ՝ թէ ի հպարտութենէ ։ Ա՛ն լինէր ի՞ սուրբն այն-

յն

նչ մահուչափ. և երկրորդ՝ զի նոյնպես ստոյգ իցէ, թէ չէ ըստ պատշաճի խոստովանեալ։ Ըստ նմին օրինակի մի թողլ տացե զներկայ ընդ երկրայականս մեզս խոստովանել, այլ միայն զնոտայգն, և սոսկապէս ընդ բացարձակապէս հարկաւոր պարագայիցն միայն. և զգուշացուացէ զնա, զի մի արասցէ զտագնապիլ, և զբոստնամի մանրագնիւն քննութիւն, այլ զմիջասահմանն միայն։ Իբ յորժամ ոչ ունիցի, բայց եթէ ներկրայական մեզս, հրամայեսցէ՝ առանց լսելոյ՝ երթալ ի պատարագել, կամ մաչել ի հաղորդութիւն։ Իգ պատճառ սոցա է, զի դրական օրէնքն ի վր նիւթական ամբողջութեան խոստովանութեան՝ ոչ պարտաւորեն ընդ ծանր ինաստ, ոչ ասացեալ ի վերոյ զդրական օրինաց ի հասարակի. արդ՝ մնաս մեծ լինէր, և տառապանք խճճմտին, եթէ զամ երկրայականս, եթէ զներկայս, և եթէ զանցեալս պարտէր խոստովանել, ոչ երբէք լինէր վախճան խճճմտութեանց, այլ անտի առաւել ևս բազմապատկէր, և կնճռոտ. և այսպէս լինէր մշտընջենաւոր տագնապ, և տառապանք անտանելի. վասն եթէ զանց արասցէ զմեղսք ինչ, այն ոչ գրի նմի

Ընդ սակ յետոյ ի բոլորումն բանիցս՝ յուշ լինցի խոստովանահօրն, ի բանս՝ և ի վճիռս իւր մի խօսել առ ի կարծ, իբր երկբայեալ, կամ համարեալ ինչ. այլ տուգիր վճռել, և պատուիրել. ապա թէ ոչ՝ ոչ դադարի տագնապն, այլ առաւել ևս զօրանայ։ Իե ևս ընդ երկչոտից՝ հոգւով հեզութեան վարել, ընդ հըպարտաց՝ խստիր ինչ, այլ ոչ ածել ի յուսահատութիւն, այլ խառնել զիւղ ընդ գինւոյ։

Լինդրի եօթնևերորդ։ Ո՞իարդ պարտ է պէսպէս տալ առարկութեանց խճճմտոյից։

Պատասխանի առ ի բաց խորշելոյ ի խորհրդոյ, և ի պատուհիրանաց խոստովանահարց, ասեմն խճճմտոյք։ Ելախ՝ թէ խոստովանահայրն ոչ ի մտացս ըստ բաւականին զծմն։ Երկրորդ՝ թէ նոքա լաւագոյն ճանաչեն զանձինս, քան ո՞ք և իցէ այլ։ Երրորդ՝ եթէ լինիցէ ի վտանգի մահու, ոչ կամիմ առնել այսպէս, և ի նմին վիճակի մեռանիմ։ Չորրորդ՝ յերկրայականս ընտրել պարտ է զապահովագոյն մասն, և զբազդագոյն նախադասել, քան զանստգոյն։

Ելաջնոյն պարտ է տալ պէիի, թէ այր խոհեմ ոչ առնէ ինչ կուրօրէն, և անխորհուրդ, և եթէ չէր ըստ բաւականին իմացեալ խոստովանահայրն, զայս՝ կամ զայն ոչ պատուիրեր։

յին ո՞ւ։ Ելուկաս. Ֆ. 5. 7։ Երկրորդ՝ եթէ է բարձրամիտ, և եթէ ընդդէմ կանոնաց խոհեմութեան, և խնարհութեան վերնագոյն համարի զբաւտուն իւր, մանաւանդ զայսօրինակ ամբոխանալն, և զբաւտումն առաջնորդին։ Երրորդ՝ եթէ ստոյգ առաջնորդն, նա ինքն խճճմտոյն ոչ մեղանչէ հնազանդելովք, և միաձայն վիպուն սրոյ հարց հոգևորաց, վստի առնէ որ ապահովագոյն է, և զոր ինձ ինդրէ ի նմանէ։

Երրորդ՝ ուսուցանէ նմա, եթէ դրական օրինք, եթէ ձեռայն, և եթէ մարդկային, ոչ պարտաւորեն ընդ ծանր ինաստ, և ընդ մեծամեծ դժուարութիւն, որ ասի բարոյական անկարուն. արդ՝ մեծամեծ տագնապն, և նեղութիւնն, է մեծամեծ դժուարութիւն։ Ալ այսորիկ զխճճմտոյն, որ հանապազ տագնապի ի ժամերգութիւս, և միշտ երկնչի, թէ գուցէ զանց այսրեալ ինչ իցէ, կամ կասկածին ցրուեալ մտօք, արգելցէ ի կերկրնելոյ. նա թէ եթէ իցէ այնպէս խճճմտոյ, մինչև հաղիւ վախճան տալ կրինելոյն, և անտի կրել զծանր և զհանապազորդ տառապանս, ամենևին արգելուլ պարտ է նմա զժամերգութիւնն իրր բարոյապես անկարելի։

Չորրորդ՝ հրամայեսցէ նմա, զի մի ինչ սմենևին, եթէ զեղեալ, և եթէ զորս հանդերձեալ է առնել, համարեսցի մահուչափ մեղս, բայց եթէ որ ստուգիւ յայտնի իցէ նմա լինել մահուչափ, և այնպէս ստուգիւ, մինչև կարող իցէ երդնուլ՝ թէ է մահուչափ. վասնզի յերկրայականս, ոչ ծանուցանէ կանոն իրաւանց, ի հասարակ հանդիպելոյ ի խոհեմ ընդ խոստովանել։ Ելրդ՝ քանզի խճճմտոյն սովոր է երկբայիլ, կամ երևակայել, լինել մեղք, կամ լինել մահուչափ, որք ոչ են, իրաւամբ ընդ թագաւոր յերկրայականս ոչ լինել այնպիսի։ Իե այնզի՝ որովհետև ի վր քաջայայտ իրաց երկբայի, և կասկածի լինել անդ չարուեն, ուր և ոչ ստուգիւ ինչ չարութեան գտանի, լինէր անտանելի բեռն, եթէ պարտ էր ունել գործնականապէս իբրև զմեղս որ ինչ անկանի ընդ երկբայութիւն նորա։

